

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՍՆՄԱԾՁԲ-21/9

ք. Երևան

<<23> 02. 2021թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը՝ ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ Վ. Գասպարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու) մի կողմից և Ավետիսյան Բաբկեն Ա/Ձ-ն (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել ներկայացուցչական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված



2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է մինչև 1000000(մեկ միլիոն) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ դրում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2-ի և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են

պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ ԿԳՄՍՆ

ք.Երևան, Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011018562
ՀՎՀՀ 02698732


Գլխավոր քարտուղարի տեղակալ՝


Ա. Գազարյան
(ստորագրություն) Կ.Տ.

02698732

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Ավետիսյան Բաբկեն» Ա/Ձ
ք.Երևան, Քրիստափորի 92., բն. 22
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570022035270100
ՀՎՀՀ 87592758


Ք. Ավետիսյան
(ստորագրություն) Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ՓԱՄԱՆԱԿԱՊՈՒՅՑ

Ծառայության

Նոստրոգի պլանով նախատեսված միջանցիկ րաձեռնարկի ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը*	Չափակերպով ներկայացված ծառայություններ	Միավորի մասնագիտացված	Մատուցման վայր	Մատուցման ժամկետ	
							Մատուցման վայր
79111200/2	Ներկայացուցչական ծառայություններ	<p>Ծառայությունը նախատեսում է հետևյալ նկարագրությանը համապատասխան ապրանքատեսակների ձեռքբերման հետ կապված ծառայությունների մատուցումը:</p> <ol style="list-style-type: none"> Գրիկ կարմիր դառ՝ Կարաս 0.7 Լ-ոց ապակյա տարրայով կամ համարժեք, Գրիկ սպիտակ չոր՝ Կարաս 0.7 Լ-ոց ապակյա տարրայով կամ համարժեք, Ջուր Բյուրեղ 0.5 պլաստման տարրայով կամ համարժեք, Ջուր Բյուրեղ 0.5 ապակյա տարրայով կամ համարժեք, Մրգահյութ Սանդորա 1-ոց թղթյա տուփով (նուրբ, խնձոր, նարինջ, բալ, կարմիր նարինջ) կամ համարժեք, Սուրճ Լեթո Կրաբիկա Օրիգինալ 100գ-ոց թղթյա տուփով կամ համարժեք, Թեյ ԼԻՊՏՈՆ թղթյա տուփով (տուփի մեջ 25 պարկիկներով) կամ համարժեք, Շոկոլադե սալիկներ ՄԵՐՍԻ մեծ թղթյա տուփով կամ համարժեք, Շոկոլադե սալիկներ ՄԵՐՍԻ միջին տուփով կամ համարժեք, Խնձոր տեղական, Լիմոն, Նարինջ, Բանան, Կիվի, Թուրինջ, Մանդարին, Շիրան 1-ին տեսակ ամառային սեզոն, Շիրան 2-րդ տեսակ ամառային սեզոն, Խաղող 1-ին տեսակ ամառային սեզոն, Խաղող 2-րդ տեսակ ամառային սեզոն, Կեռաս 1-ին տեսակ /չափը միջին /ամառային սեզոն, Կեռաս 2-րդ տեսակ /չափը մեծ/ ամառային սեզոն, Ելակ 1-ին տեսակ ամառային սեզոն, Ելակ 1-ին տեսակ ձմեռային սեզոն, Ելակ 1-ին տեսակ գարնանային սեզոն, Տանձ տեղական /անտառային գերեզկուղի/, Նյութ տեղական, Նյութ ներմուծված, Վարպեն ջուր ԲՁՆԻ 0.5լ ապակյա տարրայով կամ համարժեք, Վոդկա Վոլկո 0.5լ-ոց ապակյա տարրայով կամ համարժեք, Կոնյակ Նյու 0.5լ-ոց ապակյա տարրայով կամ համարժեք, Գարգառախ Կոլկա-Կոլկա 0.25լ ապակյա տարրայով կամ համարժեք 	ըմաՆ	1	1000000	Ք. Երևան, ՀՀ ԿԿԳՄՍՆ, Կ. Սաքոբանյան 3, Կառավարական տուն 2	2021թ 14-րդ եռամսյակների ընթացքում, Պատվիրատուի կողմից ներկայացված

Տեխնիկական բնութագրում որևէ անբացատրելի կետեր չկան: Եթե մասնագետը հարկ է տեսնում, որ փոփոխություններ կան, ապա պետք է նշի դրանք և համարժեքները: Ծառայության մատուցման վերջնական փուլում կարող է լինել փոփոխություններ, որոնք կապված չեն փոփոխությունների հետ: Ծառայությունը մատուցվելու ամսաթիվը կից ցանկով սահմանված միջոցներով:



Ստորագրող: ԿԱՏՔՈՂ
 Ք. Ավետիսյան

Վ. Գառայարյան


Միավոր գների ցանկ


N	Ապրանքի անվանումը	Չափի միավոր	Միավորի գինը ՀՀ դրամ	Ընդհանուր գինը ՀՀ դրամ
1.	Գինի կարմիր դառը՝ Կարաս 0.7 լ-ոց ապակյա տարրայով	հատ	4950	4950
2.	Գինի սպիտակ չոր՝ Կարաս 0.7 լ 0.7 լ-ոց ապակյա տարրայով	հատ	4750	4750
3.	Ջուր Բյուրեղ 0.5 պլաստմասե տարրայով	հատ	150	150
4.	Ջուր Բյուրեղ 0.5 ապակյա տարրայով	հատ	230	230
5.	Մրգահյութ Սանդորա 1լ 1լ-ոց թղթյա տուփով (մուգտի, խնձոր, նարինջ, բալ, կարմիր նարինջ)	հատ	720	720
6.	Սուրճ Լեթո Արաբիկա Օրիգինալ 100գ-ոց թղթյա տուփով	տուփ	570	570
7.	Թեյ ԼիՊՏՈՆ թղթյա տուփով (տուփի մեջ 25 պարկիկներով)	տուփ	450	450
8.	Շոկոլադե սալիկներ ՄԵՐՍԻ մեծ թղթյա տուփով	տուփ	8450	8450
9.	Շոկոլադե սալիկներ ՄԵՐՍԻ միջին թղթյա տուփով	տուփ	4770	4770
10.	Խնձոր տեղական	կգ	900	900
11.	Լիմոն	կգ	1300	1300
12.	Նարինջ	կգ	1000	1000
13.	Բանան	կգ	770	770
14.	Կիվի	կգ	800	800
15.	Թուրինջ	կգ	950	950
16.	Մանդարին	կգ	770	770
17.	Ծիրան 1-ին տեսակ ամառային սեզոն	կգ	1200	1200
18.	Ծիրան 2-րդ տեսակ ամառային սեզոն	կգ	700	700
19.	Խաղող 1-ին տեսակ ամառային սեզոն	կգ	700	700
20.	Խաղող 2-րդ տեսակ ամառային սեզոն	կգ	500	500
21.	Կեռաս 1-ին տեսակ /չափր միջին /ամառային սեզոն	կգ	1000	1000
22.	Կեռաս 2-րդ տեսակ /չափր մեծ/ ամառային սեզոն	կգ	700	700
23.	Ելակ 1-ին տեսակ ամառային սեզոն	կգ	1000	1000
24.	Ելակ 1-ին տեսակ աշնանային սեզոն	կգ	2000	2000
25.	Ելակ 1-ին տեսակ ձմեռային սեզոն	կգ	4000	4000
26.	Ելակ 1-ին տեսակ գարնանային սեզոն	կգ	2000	2000
27.	Տանձ տեղական /անտառային գեղեցկուհի/	կգ	1500	1500
28.	Նուռ տեղական	կգ	1500	1500
29.	Շաքարավազ	կգ	450	450
30.	Շաքարային ջուր ԲՅՆԻ 0.5լ ապակյա տարրայով	հատ	250	250
31.	Մոնյակ Ախթամար 0.5լ 0.5լ-ոց ապակյա տարրայով	հատ	15200	15200
32.	Մոնյակ Լադոն 0.5լ-ոց ապակյա տարրայով	հատ	41000	41000
33.	Գազով հյութ Կոկա-Կոլա 0.25լ ապակյա տարրայով	հատ	270	270

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Կ Ա Տ Ա Ր ՈՂ




 Վ. Գասպարյան
 (ստորագրություն) Կ.Տ.


 Բ. Ավետիսյան
 (ստորագրություն) Կ.Տ.



